ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Ջրվեժ համայնքում 2025 թվականին մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի նիստ

Գ.Ջրվեժ «14» մայիսի 2025թ.

Նիստի մասնակիցներ՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հայկ Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արմինե Պետրոսյան, Անահիտ Մարգարյան, Սոնա Հովհաննիսյան, Վահե Սիրականյան, Լուսինե Երիցյան, Լիանա Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սաթենիկ Աղաջանյան

Նիստի օրակարգ՝

Համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 8-ի թիվ 57-Ա որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին: Քննարկվելու են գործընթացի կազմակերպման կարգը և ծրագրի իրականացման հետ կապված անհրաժեշտ գործողությունները:

Ելույթ ունեցան՝

- Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդանյանը, ով հանդես եկավ բացման խոսքով՝ նշելով մասնակցային բյուջետավորման իրականացման նպատակները: Ներկայացվեց համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 14-ի թիվ 622-Ա որոշմամբ սահմանված հավելվածները, այդ թվում՝ գործընթացի իրականացման ժամանակացույցը:
- Հանձնաժողովի անդամ Սոնա Հովհաննիսյանը ներկայացրեց բնակիչների մասնակցության ապահովման, առաջարկների հավաքագրման անհրաժեշտությունը:
- Հանձնաժողովի անդամ Անահիտ Մարգարյանը նշեց, որ անհրաժեշտ է հնարավոր միջոցներով իրազեկել բնակիչներին գործընթացի վերաբերյալ՝ ապահովելու համար բնակիչների վստահությունը ՏԻՄ-երի կողմից ձեռնարկվելիք ծրագրերում իրենց սեփական գաղափարների կարևության վերաբերյալ:

Առաջարկեցին՝

- Հանձնաժողովի անդամ Լիանա Սահակյանն առաջարկեց տեղեկատվությունը վարչական շենքերից բացի տեղադրել նաև դպրոցների, մանկապարտեզների շենքերում՝ աշխատակիցների և սաների ծնողների համար տեսանելի վայրերում:

Որոշեցին՝

- Հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացնել իրազեկում:
- Համայնքի պաշտոնական կայքում, սոցիալական կայքում տեղադրել հայտարարություններ:
- Վարչական շենքերում, մանկապարտեզների, դպրոցների շենքերում ցուցատախտակների վրա տեղադրել հայտարարություններ:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ.Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ս. Աղաջանյան